

Հ Ր Ա Մ Ա Ն N 276-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐԻ

«13» ՕԳՈՍՏՈՍԻ 2014 Թ.

ՔԱՂ. ԵՐԵՎԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐԻ
ՏԵՂԱԿԱԼՆԵՐԻ ՄԻՋԵՎ ԱՇԽԱՏԱՆՔԻ ԲԱՇԽՈՒՄՆ ԻՐԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ ԵՎ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐԻ
2009 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒԼԻՍԻ 9-Ի ԹԻՎ 117-Ա ՀՐԱՄԱՆՆ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ
ՃԱՆԱԶԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2002 թվականի նոյեմբերի 28-ի N 1917-Ն որոշմամբ հաստատված N 1 հավելվածի 12-րդ կետի դ) և թ) ենթակետերը, 14-րդ կետը, ինչպես նաև հաշվի առնելով Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարի տեղակալների միջև աշխատանքի հստակ բաշխումն իրականացնելու անհրաժեշտությունը, Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարությանը վերապահված քաղաքականության իրականացման բնագավառներում Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարի տեղակալների կողմից համապատասխան աշխատանքների համակարգվածությունը և վերահսկողությունը ապահովելու նպատակով.

Հ Ր Ա Մ Ա Յ ՈՒ Մ Ե Մ՝

1. Սահմանել՝

1) Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարի առաջին տեղակալ Արսեն Մկրտչյանը համակարգում է արդարադատության նախարարության (այսուհետ՝ Նախարարություն) աշխատանքները՝ Նախարարությանը վերապահված քաղաքականության իրականացման իրեն հանձնարարված հետևյալ բնագավառներում՝

ա) Հայաստանի Հանրապետության օրենսդրության կատարելագործման և համակարգման,

բ) իրավական ակտերի նախագծերի մշակման և դրանց շրջանառության կազմակերպման,

գ) իրավական ակտերի պաշտոնական պարզաբանման նախագծերի պատրաստման,

դ) իրավական ակտերի (նախագծերի), միջազգային պայմանագրերի պետական իրավական փորձաքննության և պետական գրանցման ապահովման,

ե) իրավական ակտերի պաշտոնական թարգմանության, հրատարակման և վերահրատարակման ապահովման,

զ) օրենսդրական, գերատեսչական կամ տեղական ինքնակառավարման մարմինների իրավական ակտերի պաշտոնական ինկորպորացիայի, հաշվառման և դասակարգման ապահովման,

է) օրենքով սահմանված կարգով իրավական ակտերի, այդ թվում՝ Հայաստանի Հանրապետության և օտարերկրյա անձանց միջև կնքված պայմանագրերի պաշտոնական օրինակների հաշվառման համակարգման և պահպանման,

ը) սահմանադրական բարեփոխումների աշխատանքների ապահովման,

թ) պետաիրավական և համանման ոլորտներում աշխատանքների իրականացման,

ժ) դատավորների և դատախազների մասնագիտական պատրաստման և վերապատրաստման:

2) Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարի առաջին տեղակալ՝ Ա. Մկրտչյանը իրեն հանձնարարված բնագավառներում համապատասխան աշխատանքների համակարգումն իրականացնում է՝ Նախարարության աշխատակազմի օրենսդրության վերլուծության և կատարելագործման և համակարգի իրավական ապահովման վարչությունների, իրավական ակտերի փորձաքննության գործակալության, «Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության թարգմանությունների կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպության, «Պաշտոնական տեղեկագիր» փակ բաժնետիրական ընկերության և «Արդարադատության Ակադեմիա» պետական ոչ առևտրային կազմակերպության միջոցով:

3) Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարի առաջին տեղակալ Ա. Մկրտչյանը իրեն հանձնարարված բնագավառներում իրականացնում է Հայաստանի Հանրապետության կառավարության 2002 թվականի նոյեմբերի 28-ի N 1917-Ն որոշմամբ հաստատված N 1 հավելվածի 8-րդ կետի ա) և բ), ենթակետերով, 12-րդ կետի գ), դ) և ժ) ենթակետերով նախատեսված հարցերի նախնական քննարկումները:

4) Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարի տեղակալ Արտյոմ Գեղամյանը համակարգում է Նախարարության աշխատանքները՝ Նախարարությանը վերապահված քաղաքականության իրականացման իրեն հանձնարարված հետևյալ բնագավառներում՝

ա) նոտարական գործունեության ապահովման,

բ) Համաշխարհային բանկի կողմից ֆինանսավորվող ծրագրերի համակարգման,

գ) հանցանք կատարած անձանց հանձնման, դատապարտյալների փոխանցման, դատական հանձնարարությունների կատարման ոլորտի համակարգման,

դ) Նախարարության և այլ պետությունների իրավասու մարմինների միջև երկկողմ և բազմակողմ հարաբերությունների, միջազգային կազմակերպությունների հետ համագործակցության և համատեղ իրականացվող ծրագրերի ապահովման և ընդհանուր համակարգման,

ե) միջպետական հարաբերություններում Հայաստանի Հանրապետության շահերի իրավական պաշտպանության աշխատանքներին մասնակցության,

զ) «Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով և Նախարարության լիազորությունների շրջանակներում միջազգային պայմանագրերի հետ կապված լիազորությունների իրականացման, միջազգային, միջպետական կամ միջկառավարական պայմանագրերի վերաբերյալ առաջարկությունների ներկայացման,

է) Եվրոպական հարևանության քաղաքականության, ինչպես նաև Եվրասիական տնտեսական ինտեգրման շրջանակներում Նախարարության իրավասությանը վերապահված բնագավառներին առնչվող միջոցառումների ընդհանուր համակարգման և իրականացման վերաբերյալ առաջարկությունների ներկայացման,

5) Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարի տեղակալ Ա. Գեղամյանը իրեն հանձնարարված բնագավառներում համապատասխան աշխատանքների համակարգումն իրականացնում է՝ Նախարարության աշխատակազմի միջազգային իրավական հարաբերությունների և համակարգի իրավական ապահովման վարչությունների, «Դատաիրավական ծրագրերի իրականացման գրասենյակ» պետական հիմնարկի, Հայաստանի Հանրապետության նոտարական պալատի միջոցով:

6) Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարի տեղակալ Ա. Գեղամյանը իրեն հանձնարարված բնագավառներում իրականացնում է Հայաստանի

Հանրապետության կառավարության 2002 թվականի նոյեմբերի 28-ի N 1917-Ն որոշմամբ հաստատված N 1 հավելվածի 8-րդ կետի գ), դ), ե), զ), է), ժ), ժգ), ժե), ժզ), ժէ), ենթակետերով նախատեսված հարցերի նախնական քննարկումները:

7) Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարի տեղակալ Սուրեն Քրմոյանը համակարգում է Նախարարության աշխատանքները՝ Նախարարությանը վերապահված քաղաքականության իրականացման իրեն հանձնարարված հետևյալ բնագավառներում՝

ա) քրեակատարողական ոլորտի քաղաքականության մշակման և մեթոդական ղեկավարման, նախարարությանը վերապահված լիազորությունների շրջանակներում պատիժների կատարման և քրեակատարողական ծառայության գործունեության ապահովման և համակարգման,

բ) դատական ակտերի հարկադիր կատարման ոլորտի քաղաքականության մշակման և մեթոդական ղեկավարման, նախարարությանը վերապահված լիազորությունների շրջանակներում դատական ակտերի հարկադիր կատարման ծառայության գործունեության ապահովման և համակարգման,

գ) քաղաքացիական կացության ակտերի պետական գրանցման ոլորտի քաղաքականության մշակման, նախարարությանը վերապահված լիազորությունների շրջանակներում քաղաքացիական կացության ակտերի պետական գրանցման գործունեության ապահովման և համակարգման,

դ) սնանկության գործերով կառավարիչների որակավորման կազմակերպման և իրականացման,

ե) կոռուպցիայի դեմ պայքարի ոլորտի քաղաքականության և ռազմավարական ծրագրերի մշակման և իրականացման,

զ) նախարարությանը վերապահված լիազորությունների շրջանակներում կենսաթոշակային ոլորտի բարեփոխումների իրականացման,

է) զորահավաքային նախապատրաստության, զորահավաքի և քաղաքացիական պաշտպանության միջոցառումների պլանավորման և իրականացման,

ը) օրենքով և այլ իրավական ակտերով սահմանված կարգով համապատասխան վարչական վիճակագրական հաշվետվությունների (հարցաթերթեր, տեղեկանքներ և այլն) ներդրման և դրանց միջոցով հավաքագրված տվյալների ու տեղեկությունների հիման վրա վարչական վիճակագրական ռեգիստրի վարման,

թ) նախարարության համակարգի և աշխատակազմի ֆինանսական հոսքերի ծրագրավորման և հաշվապահական հաշվառման, նյութատեխնիկական և նորագույն տեխնոլոգիաներով ապահովման, կադրային քաղաքականության հետ կապված աշխատանքների համակարգման,

ժ) Նախարարության համակարգի և աշխատակազմի փաստաթղթաշրջանառության կազմակերպման և իրականացման,

ժա) Նախարարության համակարգի և աշխատակազմի տնտեսական, սոցիալական, կադրային և համանման ոլորտներում աշխատանքների ապահովման:

8) Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարի տեղակալ Ա.Քրմոյանը իրեն հանձնարարված բնագավառներում համապատասխան աշխատանքների համակարգումն իրականացնում է՝ Նախարարության աշխատակազմի Քրեակատարողական ծառայության, Դատական ակտերի հարկադիր կատարումն ապահովող ծառայության, քաղաքացիական կացության ակտերի գրանցման գործակալության, համակարգի իրավական ապահովման վարչության, ֆինանսական, հաշվապահական հաշվառման, անձնակազմի կառավարման բաժինների, ինչպես նաև «Աջակցություն դատապարտյալներին» հիմնադրամի և «Իրավախախտում կատարած անչափահասների հատուկ ստեղծագործական կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպության միջոցով:

9) Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարի տեղակալ Ա.Քրմոյանը իրեն հանձնարարված բնագավառներում իրականացնում է Հայաստանի Հանրապետության կառավարության 2002 թվականի նոյեմբերի 28-ի N 1917-Ն որոշմամբ հաստատված N 1 հավելվածի 8-րդ կետի ը), ը.1), ը.2), ժդ), ժը), իա.1) ենթակետերով, 12-րդ կետի ը), ժա), ժբ), ժգ), ժդ), ժզ) ենթակետերով նախատեսված հարցերի նախնական քննարկումները:

10) Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարի տեղակալ Արման Թաթոյանը համակարգում է Նախարարության աշխատանքները՝ Նախարարության վերապահված քաղաքականության իրականացման իրեն հանձնարարված հետևյալ բնագավառներում՝

ա) մարդու իրավունքների եվրոպական դատարանի հետ կապերի,

բ) մարդու իրավունքների եվրոպական դատարանի իրավական դիրքորոշումներից բխող Հայաստանի Հանրապետության օրենսդրության մեջ փոփոխություններ, լրացումներ կատարելու, համապատասխան իրավական ակտերի նախագծերի մշակման, դրանց կիրառումն ապահովելու առաջարկությունների ներկայացման,

գ) Հայաստանի Հանրապետության վերաբերյալ մարդու իրավունքների եվրոպական դատարանի կայացրած դատական ակտերի կատարման, այդ շրջանակներում Եվրոպայի խորհրդի Նախարարների կոմիտեի համապատասխան ստորաբաժանման հետ կապերի,

դ) Հայաստանի Հանրապետության տարածքում ստեղծվող իրավաբանական անձանց (բացառությամբ բանկերի և վարկային կազմակերպությունների), դրանց առանձնացված ստորաբաժանումների և հիմնարկների, անհատ ձեռնարկատերերի և օրենքով նախատեսված այլ կազմակերպությունների պետական գրանցման և հաշվառման ապահովման,

ե) քրեական և քրեադատավարական, օպերատիվ-հետախուզական գործունեության օրենսդրության մշակման և կատարելագործման,

զ) ազատությունից զրկման վայրերում ձերբակալված և կալանավորված անձանց իրավունքների պաշտպանության ապահովման ոլորտի օրենսդրության, համապատասխան միջազգային կազմակերպությունների (ԵԽ Խոշտանգումների կանխարգելման կոմիտե, ՄԱԿ-ի Խոշտանգումների դեմ կոմիտե և այլն) հետ կապերի,

է) համապատասխան մասնագետների ուսուցման, վերապատրաստման, վերաորակավորման ապահովման,

ը) դատական փորձաքննությունների ապահովման, փորձաքննությունների, գիտամեթոդական աշխատանքների կազմակերպման և կատարման,

թ) միջպետական հարաբերություններում Հայաստանի Հանրապետության շահերի իրավական պաշտպանության աշխատանքներին մասնակցության,

ժ) փաստաբանական գործունեության ոլորտի քաղաքականության մշակման և իրականացման:

11) Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարի տեղակալ Ա.Թաթոյանը իրեն հանձնարարված բնագավառներում համապատասխան աշխատանքների համակարգումն իրականացնում է՝ Նախարարության աշխատակազմի մարդու իրավունքների եվրոպական դատարանի հետ կապերի և համակարգի

իրավական ապահովման վարչությունների, իրավաբանական անձանց պետական ռեգիստրի գործակալության, «Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության իրավաբանական ինստիտուտ», «Հայաստանի Հանրապետության փորձագիտական կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպությունների միջոցով,

12) Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարի տեղակալ Ա.Թաթոյանը իրեն հանձնարարված բնագավառներում իրականացնում է Հայաստանի Հանրապետության կառավարության 2002 թվականի նոյեմբերի 28-ի N 1917-Ն որոշմամբ հաստատված N 1 հավելվածի 8-րդ կետի թ), ժզ), ժթ) ենթակետով նախատեսված հարցերի նախնական քննարկումները:

2. Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարի տեղակալները օրենսդրությամբ սահմանված կարգով և դեպքերում իրականացնում են իրենց հանձնարարված բնագավառներից բխող պետական մասնակցությամբ առևտրային կազմակերպություններում մասնակցի (բաժնետիրոջ) լիազորությունների իրականացման, ինչպես նաև պետական ոչ առևտրային կազմակերպությունների ու պետական հիմնարկների կառավարման աշխատանքների համակարգման գործառույթներ:

3. Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարի բացակայության դեպքում, նրա հանձնարարությամբ, նախարարի պարտականությունները կատարում է Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարի առաջին տեղակալը կամ տեղակալներից մեկը:

4. Հաստատել Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարի տեղակալների կողմից՝ ըստ բնագավառների աշխատանքների համակարգման ցանկը՝ համաձայն հավելվածի:

5. Ուժը կորցրած ճանաչել Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարի 2009 թվականի հուլիսի 9-ի «Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարի տեղակալների միջև աշխատանքի բաշխումը սահմանելու մասին» N 117-Ա հրամանը:

Հավելված

Հայաստանի Հանրապետության
արդարադատության նախարարի
2014 թվականի օգոստոսի 13-ի
N 276-Ա հրամանի

ՑԱՆԿ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐԻ
ՏԵՂԱԿԱԼՆԵՐԻ ԿՈՂՄԻՑ՝ ԸՍՏ ԲՆԱԳԱՎԱՌՆԵՐԻ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԵՎ
ՕՐԵՆՍԴՐՈՒԹՅԱՆ ՄՇԱԿՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ

ՀԱՄԱԿԱՐԳՈՂԸ

ԲՆԱԳԱՎԱՌԸ

1. Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարի առաջին տեղակալ

Արսեն ՄԿՐՏՉՅԱՆ

Տեսչական բարեփոխումների, տարածքային կառավարման, ընտրական համակարգի, հանրային ծառայությունների կարգավորման, բարեգործական հանձնաժողովի աշխատանքների կազմակերպման, տնտեսական մրցակցության, էկոնոմիկայի, ֆինանսների, հարկային, մաքսային, հեռուստատեսության և ռադիոյի, էներգետիկայի, պետական գույքի կառավարման, վարչարարության, արբիտրաժային

2. Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարի տեղակալ

Արտյոմ ԳԵՂԱՄՅԱՆ

Միգրացիայի, մշակույթի, սփյուռքի, արտաքին գործերի, մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմի հետ կապերի

3. Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարի տեղակալ

Սուրեն ՔՐՄՈՅԱՆ

Պաշտպանության, արտակարգ իրավիճակների, առողջապահության, աշխատանքի և սոցիալական հարցերի, գյուղատնտեսության, բնապահպանության, քաղաքաշինության, քաղաքացիական ավիացիայի, հանրային ծառայության

4. Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարի տեղակալ

Արման ԹԱԹՈՅԱՆ

Ազային անվտանգության, Դատախազության, Ոստիկանության, Քննչական կոմիտեի, հատուկ Քննչական ծառայության, նախաքննության և հետաքննության, թմրամիջոցների ապօրինի շրջանառության, փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի, կրթության և գիտության